«Հաշմանդամության սահմանման նոր մոդելի մշակում և փորձարկում» ծրագիր

2018 դեկտեմբերի 4-ից 7-ը ԱՀԿ ՖՄԴ հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման համար լրամշակված գործիքների կիրառմամբ կազմակերպած փորձնական գնահատումների արդյունքները

Դեկտեմբեր, 2018թ.

Ծրագրի աշխատանքներն իրականացվել են Ի. Էս. Այ. Խորհրդատվական ընկերության հետ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միկրոգրանտային ծրագրի շրջանակում

Բովանդակություն

2018 դեկտեմբերի 4-ից 7-ը կազմակերպած փորձնական գնահատումների արդյունքները. 3
0-3 տարիքային խումբ 6
3-6 տարեկանների խումբ 8
6-15 տարեկանների խումբ 8
15-18 տարեկանների խումբ. 16
18 + տարեկանների խումբ. 20
Առաջարկություններ 22
Հավելվածներ 24
ԱՀԿ ՖՄԴ ներդրման շրջանակներում 2018 թվականի դեկտեմբերի 4-7 իրականացվող պիլոտ ծրագրի գործընթացի նկարագրություն 24
Ծածկագրերի բառարան 28

2018 դեկտեմբերի 4-ից 7-ը կազմակերպած փորձնական գնահատումների արդյունքները

2018 թվականի ընթացքում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների, առողջության և հաշմանդամության միջազգային դասակարգչի (ԱՀԿ ՖՄԴ) հիման վրա հաշմանդամության գնահատման և սահմանման նոր մեթոդաբանության մշակման նպատակով ձևավորված աշխատանքային խումբը[1] սերտորեն համագործակցել է ԵՄ SOCIEUX+ ծրագրի[2] շրջանակում հրավիրված փորձագիտական խմբի հետ և լրամշակել 2016 թվականին մշակված գործիքակազմը: Հաշմանդամության գնահատման և սահմանման նշյալ գործիքակազմի կիրառմամբ 2017 թվականի ընթացքում[3] գնահատվել էր ավելի քան 1800 մարդ, ովքեր առաջին անգամ էին դիմում հաշմանդամության համար: Գնահատման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ թեև մշակված գործիքները հնարավորություն են տալիս համակողմանի դիտարկելու և գնահատելու փորձաքննվող անձին, սակայն ստացված տեղեկատվության ամփոփումը հնարավորություն չի տալիս սահմանելու անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը: Գնահատման արդյունքում, փորձաքննություն անցածների գրեթե 80 տոկոսի համար ֆունկցիոնալության սահմանափակման միավորը չէր գերազանցում 0. 5-ից 4 տոկոսը, մինչդեռ ըստ ԱՀԿ ՖՄԴ ֆունկցիոնալության սահմանափակման միջակայքերի, 0-4 տոկոս սահմանափակումը նշանակում է, որ անձը չունի ֆունկցիոնալության որևէ սահմանափակում:

Այս խնդիրը հիմնականում պայմանավորված էր բոլոր տեսակի առողջական խնդիրներ ունեցողներին ու հաշմանդամություն ունեցողներին մեկ միասնական հարցաշարի հիման վրա գնահատելու մեթոդաբանությամբ, որի արդյունքում որոշակի ֆունկցիաներում անձի ունեցած խնդիրները կամ կարողության և կատարողականի սահմանափակումը մեկ կամ երկու ոլորտում, անգամ եթե այդ սահմանափակումները ծանր էին կամ խորը, այսպես ասած «չեզոքացվում» էին, երբ դիտարկվում էին անձի ֆունկցիոնալության բոլոր բնագավառները: Օրինակ, եթե անձը ուներ կուրություն և սահմանափակված էր անձի տեսողության ֆունկցիան ամբողջությամբ, սակայն չուներ որևէ այլ խնդիր մյուս կենսական ֆունկցիաներում, ապա ֆունկցիոնալության

---

[1] *Աշխատանքային խմբի անդամներն են ՀՀ ԱՍՀՆ հաշմանդամների հիմնահարցերով բաժնի, Սոցիալական աջակցության վարչության, Բշկասոցիալական փորձաքննությունների գործակալության, ՀՀ ԿԳՆ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, ՀՀ Առողջապահության նախարարության, «Խարբերդի» մանկատան, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄՄԶԾ-ի, Ի. Էս. Այ. Խորհրդատվական խումբ ՀԿ ներկայացուցիչները: ԱԽ աշխատանքները համակարգում է ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալը:*

[2] *SOCIEUX+ EU Expertise in Social Protection, Labour and Employment, Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականի փետրվարին և ավարտվել դեկտեմբերին: Ծրագրի շրջանակում ԵՄ աջակցությամբ հունական փորձագետների թիմը՝ Ստատիս Տրիանտաֆուլոի ղեկավարությամբ, ներկայացրել են Աշխատանքային խմբին հաշմանդամության գնահատման Կիպրոսի մոդելը և աջակցել են մշակելու Հայաստանին հարմար գործիքակազմ:*

[3] *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի N114-Ա/1 հրամանով իրականացած ԱՀԿ ՖՄԴ սկզբունքներով բժշկասոցիալական փորձաքննության նոր մոդելի փորձնական ներդրման շրջանակներում **16.10.2017թ.-20.12.2017թ.** ընթացքում առաջին անգամ փորձաքննություն են անցել **1893** անձ:*

սահմանափակման ընդհանուր միավորը նրա մոտ շատ փոքր էր ստացվում: Ընդհանուր հարցաշարը արդարացվում էր, եթե անձը ուներ բազմակի հաշմանդամություն կամ շատ լուրջ առողջական խնդիր, որը բացասաբար էր ազդել անձի ֆունկցիոնալության բոլոր բնագավառների վրա:

Գծապատկեր 1-ը ցույց է տալիս 2017 թվականին ֆունկցիոնալ գնահատում անցածների բաշխումն ըստ s-մարմնի կառուցվածք և b-օրգանիզմի ֆունկցիաներ ծածկագրերի գնահատման ընդհանուր միավորների և d- գործունեություն և մասնակցություն ծածկագրերում ստացած միավորների: Գծապատկեր 2-ը ցույց է տալիս գնահատման արդյունքները միայն «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցողների մոտ, ովքեր հիմնականում ունեն բազմակի հաշմանդամություն:

Գծապատկեր 1: Հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալ գնահատման արդյունքները ընդհանուր հարցաշարի կիրառմամբ, 2017 թվական	**Գծապատկեր 2: «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցողների շրջանում մեկ միասնական հարցաշարի միջոցով իրականացված գնահատման արդյունքները, 2017 թվական**
	

<u>Աղբյուրը.</u> *ՀՀ ԱՍՀՆ կողմից 2017 թվականի ընթացքում առաջնակի բժշկասոցիալական փորձաքննություն անցածների շրջանում ԱՀԿ ՖՄԴ մոդելով գնահատման գործիքի փորձարկման արդյունքները, ESI խորհրդատվական խմբի հաշվարկներ*

Փորձարկման արդյունքները հուշեցին, որ անհրաժեշտություն կա վերանայելու գնահատման մոտեցումները և կիրառվող հարցաշարը կամ ֆունկցիոնալ սահմանափակման միավորի դուրս բերման մոտեցումները՝ ալգորիթմը:

2018 թվականի ընթացքում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից ձևավորված աշխատանքային խումբը սերտորեն համագործակցելով ԵՄ SOCIEUX + ծրագրի շրջանակում հրավիրված փորձագիտական խմբի հետ, վերանայեց գնահատման մոտեցումները և կիրառվող գործիքները՝ հիմք ընդունելով Կիպրոսի կողմից կիրառված տարբերակը, սակայն համապատասխանեցնելով այդ մոտեցումը Հայաստանի պահանջներին ու առանձնահատկություններին:

Փորձագետների առաջարկով, ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքային խումբը տարանջատեց նախկինում կիրառված մեկ ձևաչափը ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակների: Արդյունքում մշակվեցին հետևյալ հարցաշարերը՝

1. Լսողական խնդիրների ունեցող անձանց համար հարցաշար;
2. Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հարցաշար
3. Ինտելեկտուալ/մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար
4. Հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար և
5. Քրոնիկ հիվանդություններով պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց համար։

Նշված խնդիրները գնահատելու նպատակով հարցաշարերը տարանջատվեցին ըստ տարիքային խմբերի՝ ապահովելով, որ գնահատման ժամանակ հաշվի առնվեն տարիքային առանձնահատկությունները։ Հարցաշարերը բաշխվեցին ըստ հետևյալ տարիքային խմբերի.

1. 0-3[4] տարեկանների համար
2. 3-6 տարեկանների համար
3. 6-15 տարեկանների համար
4. 15-18 տարեկանների համար
5. 18 և բարձր տարիքի անձանց համար։

Հաշմանդամության սահմանման համար տեղեկատվության ամփոփման ալգորիթմում ներառվեցին մարմնի կառուցվածքի, օրգանիզմի ֆունկցիաների և անձի կարողության ու մասնակցության գնահատման համար ծածկագրերը՝ որոնցից ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակի, ընտրվեցին վճռորոշ ծածկագրեր, որոնց հիման վրա պետք է հաշվարկվեր ֆունկցիոնալ սահմանափակման միավորը։

Նոր գործիքակազմը և առաջարկվող ալգորիթմը փորձարկվեցին 2018 թվականի դեկտեմբերի 2-7-ը՝ ռետրոսպեկտիվ եղանակով, այսինքն կամավորության սկզբունքով փորձարկմանը մասնակցեցին արդեն իսկ հաշմանդամության խումբ ունեցող անձիք։ Փորձարկմանը մասնակցելու ցանկություն հայտնողներից[5] ընտրվեցին 24 անձ՝ ըստ տարիքային խմբերի և հաշմանդամության տեսակի կամ քրոնիկ հիվանդության ախտորոշման։ Թեև նախատեսվում էր, որ պիլոտին կմասնակցեն բոլոր տարիքային խմբերից և բոլոր տեսակի հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություն ունեցող առնվազն 50 անձ, սակայն փորձաքննությունների ժամանակ պարզ դարձավ, որ կիրառվող ալգորիթմը կամ հաշվարկի մոտեցումը պետք է վերանայվի, իսկ հարցաշարերում դեռ առկա են բացթողումներ, որոնք պետք է լրամշակել։ Ուստի որոշվեց պիլոտը դադարեցնել և լրամշակել գործիքները՝ 2018 թվականի դեկտեմբերի 10-14-ը ԵՄ SOCIEUX + ծրագրի շրջանակում հրավիրված փորձագիտական խմբի հետ քննարկելուց հետո։ Ռետրոսպեկտիվ փորձարկման մասնակիցների մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 1-ում։

Փորձարկման ժամանակ կիրառվեց նաև մինչ այդ մշակված ընդհանուր մեծ հարցաշարը, այսինքն նույն անձի մասին ստացված տեղեկատվությունը գրանցվում էր և՛ ֆոկուս և՛ ընդհանուր հարցաշարում։ Միևնույն ժամանակ, փորձաքննության արդյունքները վերահաշվարկվել են միջազգային փորձագետների այցի ժամանակ

[4] Տարիքային խմբերը կարդալ հետևյալ կերպ 0-3 – ներառված են այն երեխաները ում 3 տարին դեռ չի լրացել՝ 2 տարեկան 12 ամսական են:
[5] Երեխաներ դեպքում համաձայնությունը տվել են ծնողները և մասնակցել գնահատմանը

համաձայնեցված մոտեցման հիման վրա: Սույն հաշվետվությունը պարունակում է երկու մոտեցումների արդյունքում ստացված ամփոփ պատկերների համեմատությունը և լրամշակված ալգորիթմի տվյալները և տալիս առաջարկություններ գործընթացի վերաբերյալ:

Պիլոտի կազմակերպման մանրամասները ներկայացված են հավելված 1-ում:

Աղյուսակ 1: 2018 թվականի դեկտեմբերի 4-7-ը տետրոսպեկտիվ փորձաքննության մասնակիցների ամփոփ նկարագիրը

	0-3 տարեկան	3-6 տարեկան	6-15 տարեկան	15-18 տարեկան	18 տարեկան և բարձր	Ընդամենը
Լսողական խնդիրներ ունեցողներ			2 անձ		2 անձ	**4 անձ**
Տեսողական խնդիրներ ունեցողներ	1 անձ				1 անձ	**2 անձ**
Ինտելեկտուալ/ մտավոր խնդիրներ ունեցողներ		2 անձ	2 անձ	1 անձ	2 անձ	**7 անձ**
Հենաշարժական խնդիրներ ունեցողներ			2 անձ	1 անձ	2 անձ	**5 անձ**
Քրոնիկ հիվանդություն-ներով պայմանավորված հաշմանդամություն ունեցողներ					6 անձ	**6 անձ**
Ընդամենը	**1 անձ**	**2 անձ**	**6 անձ**	**2 անձ**	**13 անձ**	**24 անձ**

Պիլոտի արդյունքները համեմատվել են ըստ տարիքային խմբերի և ըստ հաշմանդամության տեսակի:

0-3 տարիքային խումբ. դիտարկվել է մեկ երեխա, տեսողական խնդիրներով: Ըստ ՀՄԴ 10[6]-ի, երեխայի հիմնական հիվանդության դասը 7-րդ, ենթադասը՝ H18, ունի եղջերենու բնածին պղտորում: Ուղեկվող հիվանդություններ չեն նշվել: Երեխան ունի «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ըստ գործող չափորոշիչների:

[6] *ԱՀԿ Հիվանդությունների միջազգային դասակարգիչ 10-րդ թողարկում, որի հիման վրա տրվում են հիվանդությունների ախտորոշումները:*

Ընդհանուր հարցաշարով գնահատման դեպքում երեխայի մոտ արձանագրվել են սահմանափակումներ հետևյալ ծածկագրերում[7].

- s298-ում՝ 3,
- b210-ում՝ 2
- d166-ում՝ – 4
- d 445, d 450 և d455 – ում՝ 3
- d510, d520, d540, d550 – ում՝ 3

Երեխայի ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը գնահատվել է 12%, կամ թեթև աստիճանի: Միջավայրային գործոններից երեխայի համար գնահատվել են

- e110 – 1
- e115, e120 e 125 – 3
- e135 – 2
- e580 -1
- e585 -2

Ֆոկուս արձանագրությամբ երեխայի մոտ գրանցվել են հետևյալ խնդիրները.

- s220, s230, b210 -3
- d110 - 4
- d120 - 1
- d130 - 4
- d131 և d132 -3
- d133 -2
- d155 -3
- d210 -3
- d335 -1
- d415 -3
- d450 և d455 – ում՝ 3
- d510, d520, d540, d550 – ում՝ 3
- d920 -3

Երեխայի ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը գնահատվել է 46%, կամ միջին աստիճանի: Միջավայրային գործոններից երեխայի համար գնահատվել են հետևյալ ծածկագրերը՝

- e110 – 1
- e115, e125, e130 – 3
- e140 – 2
- e575 -1
- e585 -2

Եթե տվյալ երեխայի համար հաշվարկվի լրամշակված ալգորիթմը, որի համար պետք է հիմք լինեն 15 վճռորոշ ծածկագրեր, ապա տվյալ երեխայի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը կկազմի՝ 55%, կամ ծանր ֆունկցիոնալ սահմանափակում:

[7] *Ծածկագրերի բառարանը բերված է հավելված 2-ում*

Տվյալ պարագայում լրամշակված մոտեցումն առավել ճիշտ է արտացոլում երեխայի ֆունկցիոնալ նկարագիրը և նրան անհրաժեշտ ծառայությունների ոլորտները:

3-6 տարեկանների խումբ. Այս խմբում դիտարկվել են երկու երեխաներ՝ մտավոր խնդիրներով: ՀՄԴ-ով երկու դեպքում էլ ախտորոշումը նույնն է՝ մտավոր զարգացման խորը հապաղում: Հիմնական հիվանդությունը 5-րդ դաս, ենթադասը՝ F72, ուղեկցվող հիվանդությունը՝ Մուլ, տետրապարեզ, հիվանդության դասը՝ 6-րդ, իսկ ենթադասը՝ G80.1: երկու երեխաները՝ տղա և աղջիկ, 5 տարեկան են:

Ընդհանուր հարցաշարով՝ մարմնի կառուցվածքի ծածկագրերում երեխաների մոտ ոչ մի խնդիր չի արձանագրվել: Օրգանիզմի ֆունկցիաներում՝ b1 ծածկագրերում գրեթե բոլոր ծածկագրերում նկատվել են խնդիրներ, b310-ում՝ ծանր և խորը խնդիր, b798-ում խորը խնդիր: d-ծածկագրերում, բոլորում գրանցվել են սահմանափակումներ: Երկու երեխաների համար ամփոփված ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը կազմել է 60-62%, կամ ծանր սահմանափակում:

Ֆոկուս արձանագրությունով երկու երեխաների մոտ գնահատվել է s110 ծածկագիրը՝ 3 և 4 որակիչներով: s/b/d բոլոր ծածկագրերով հաշվարկված ֆունկցիոնալ սահմանափակման ամփոփ միավորը երեխաներից մեկի մոտ գնահատվել է 68%, իսկ մյուսի մոտ՝ 80%: Եթե այս երեխաների համար կիրառվի լրամշակված ալգորիթմը, ապա առաջինի միավորը կկազմի 76 իսկ երկրորդինը՝ 88 տոկոս: Վերջին լրամշակված մոտեցումը կրկին առավել ճիշտ է արտահայտել երեխաների կարիքները:

Միջավայրային գործոններից այս երեխաների համար գնահատվել են հետևյալ խոչընդոտները[8]՝

Գծապատկեր 1: 3-6 տարիքային խումբ, մտավոր խնդիրներ ունեցող երեխաների ֆունկցիոնալության միջավայրային խոչընդոտներն ըստ խոչընդոտի որակիչների, միավոր



6-15 տարեկանների խումբ. այս տարիքային խմբից պիլոտին մասնակցել են 6 անձ՝

2-ական լսողական, մտավոր և հենաշարժական խնդիրներով: Երկու աղջիկ և 4 տղա:

[8] Ծածկագրերի բառարանը բերված է հավելվածում

Ընդհանուր և ֆոկուս հարցաշարերով այս վեց երեխաների գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ ֆոկուս հարցաշարը հնարավորություն է տալիս առավել ամբողջական դիտարկել և վերհանել ինչպես ֆունկցիոնալության հետ կապված խնդիրները, այնպես էլ միջավայրային գործոնների ազդեցությունը: Ստորև ներկայացվում է պիլոտի արդյունքների համեմատական ըստ հաշմանդամության տեսակների:

Լսողական խնդիրներ ունեցողների գնահատման արդյունքները

Լսողական խնդրով պիլոտին մասնակցած երկու երեխաները՝ 10 և 14 տարեկան, աղջիկ և տղա, Մարի Իզմիրլյան մանկատան սաներ էին: Շատ խորը հաշմանդամություն ունեին:

Գործող չափորոշիչով երկուսն էլ հավասար կարգավիճակ ունեն՝ «հաշմանդամ երեխա»: Ընդհանուր հարցաշարով և ֆոկուս հարցաշարով գնահատման արդյունքները նույնպես ցույց են տալիս, որ այս երեխաները ունեն շատ լուրջ ֆունկցիոնալ սահմանափակումներ: Այդուհանդերձ, ֆոկուս հարցաշարով գնահատումը վեր է հանում առավել խորը, դետալացված պատկեր, իսկ ֆունկցիոնալության սահմանափակման ընդհանուր միավորի ալգորիթմի հաշվարկում ֆիքսված 15 ծածկագրեր ներառելու պարագայում, երկու երեխաների մոտ արձանագրվում է 100 տոկոս ֆունկցիոնալության խանգարում, մինչդեռ ընդհանուր հարցաշարով և նախորդ ալգորիթմով նրանք ստանում էին 57 և 48 տոկոս ֆունկցիոնալ սահմանափակում: Իրականում այդ երեխաները ոչինչ անել չէին կարողանում:

Ընդհանուր հարցաշարով գնահատվել են, բոլոր այն b ծածկագրերը, որոնք ընտրվել էին հարցաշարում և գնահատվում են բոլոր դեպքերի համար: Ֆոկուս հարցաշարում երեխաների մոտ գնահատվել են միայն b230 -Լսողության ֆունկցիաները և b310- Ձայնային ֆունկցիաները: b235. Անդաստակային (վեստիբուլյար ապաատի) ֆունկցիաները և S260. Ներքին ականջի կառուցվածքը պիլոտի ժամանակ չի գնահատվել: Փոխարենը, նոր հարցաշարով առավել մեծ ուշադրություն է դարձվում d ծածկագրերին՝ գործունություն և մասնակցություն ոլորտին:

Գծապատկեր 2: Խնդիրներ օրգանիզմի ֆունկցիաներ b ծածկագրերում, Լսողական խնդիրներ, 6-15 տարիքային խումբ





Գծապատկեր 3. Խնդիրներ գործունեություն և մասնակցություն d ծածկագրերում, լսողական խնդիրներ, 6-15 տարիքային խումբ





Ալգորիթմի հաշվարկի մեջ ընդհանուր հարցաշարի կիրառման ժամանակ հաշվի են առնվել բոլոր գնահատված ծածկագրերը, ֆոկուս հարցաշարով ընտրված 28 վճռորոշ ծածկագրերը, իսկ երրորդ տարբերակով՝ s/b/d ծածկագրերից ընտրվել են վճռորոշ 15 ծածկագրեր:



Միջավայրային գործոնների գնահատականը երկու դեպքում էլ գրեթե նույնն է

Գծապատկեր 5: Միջավայրային խոչընդոտները, Լսողական խնդիրներ, 6-15 տարիքային խումբ



Մտավոր խնդիրներ ունեցողների գնահատման արդյունքները

Պիլոտի ժամանակ գնահատվել են երկու տղաներ՝ 13 և 14 տարեկան: Երկու տղաների մոտ էլ մարմնի կառուցվածքի հետ կապված խնդիրներ չեն գրանցվել ոչ ընդհանուր և ոչ ֆոկուս հարցաշարով:

Օրգանիզմի ֆունկցիաներում ֆոկուս հարցաշարը հնարավորություն է տալիս ավելի մանրամասն գնահատել երեխաների մտավոր, ճանաչողական ու ինտելեկտուալ ֆունկցիաները: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ տղաները ունեին թեթև կամ միջին ֆունկցիոնալ սահմանափակումներ:

Գծապատկեր 6: Խնդիրներ օրգանիզմի ֆունկցիաներ b ծածկագրերում, Մտավոր խնդիրներ, 6-15 տարիքային խումբ



Գործունեություն և մասնակցություն d ծածկագրեր ավելի շատ գնահատվել են ֆոկուս հարցաշարով:

Գծապատկեր 7: Խնդիրներ գործունեություն և մասնակցություն d ծածկագրերում, մտավոր, 6-15 տարիքային խումբ





Ալգորիթմի հաշվարկի մեջ ընդհանուր հարցաշարի կիրառման ժամանակ հաշվի են առնվել բոլոր գնահատված ծածկագրերը, ֆոկուս հարցաշարով ընտրված 33 վճռորոշ ծածկագրերը, իսկ երրորդ տարբերակով՝ s/b/d ծածկագրերից ընտրվել են վճռորոշ 25 ծածկագրեր:



Գնահատման արդյունքը ցույց է տալիս, որ վերջին մոտեցումն առավել ճիշտ է գնահատում անձի խնդիրները և ապահովում ծառայությունների ստացումը: օրինակ, եթե կիրառվեր առաջին տարբերակը, ապա տղաներից երկրորդը հաշմանդամության կարգավիճակ չէր ստանա և չէր կարողանա ստանալ անհրաժեշտ ծառայությունները:

Միջավայրային գործոնների բացասական ազդեցությունը ստացել է հետևյալ պատկերը՝

Գծապատկեր 9: Միջավայրային խոչընդոտները e ծածկագրերում, մտավոր, 6-15 տարիքային խումբ





Հենաշարժական խնդիրներ ունեցողների գնահատման արդյունքները.

Հենաշարժական խնդիրներով գնահատվել են մեկ աղջիկ և մեկ տղա՝ երկուսն էլ 12 տարեկան:

Ընդհանուր հարցաշարով մարմնի կառուցվածքներում խանգարում գրանցվել է միայն հենաշարժական խնդիր ունեցող մեկ երեխայի համար՝ s798-4:

Ֆոկուս հարցաշարը ցույց է տվել խնդիրներ 4-5 ծածկագրերում.



Օրգանիզմի ֆունկցիաներում ֆոկուս հարցաշարը հնարավորություն է տալիս ավելի մանրամասն դիտարկել հոդերի ու մկանների ֆունկցիաները, ինչն առավել կարևոր է հենաշարժական խնդիրների դեպքում, քան գիտակցական ու ճանաչողական ֆունկցիաները, որոնք գնահատվել են ընդհանուր հարցաշարով, դուրս թողնելով այն կարևոր ոլորտները որոնք անհրաժեշտ են տվյալ խնդրի դեպքում անձին լիարժեք

գնահատելու համար: Բացի այդ b798 ծածկագիրը, ոչ մի տեղեկատվություն չի տալիս, քանի որ այն պետք է կիրառվի այն դեպքերում միայն, երբ ՖՄԴ ծածկագրերի մեջ չի գտնվել այն ծածկագիրը, որը թույլ կտա գնահատել տվյալ անձին: Իսկ այս պարագայում ֆոկուս հարցաշարով հնարավոր է եղել գնահատել երեխաների մոռ առկա ֆունկցիոնալ սահմանափակումները:

Գծապատկեր 11: Խնդիրներ օրգանիզմի ֆունկցիաներ b ծածկագրերում, հենաշարժական, 6-15 տարիքային խումբ



Գործունեություն և մասնակցություն ծածկագրերում ֆոկուս հարցաշարով կրկին գնահատվել են ավելի մեծ թվով ծածկագրեր, սակայն, ի տարբերություն ընդհանուր հարցաշարով տեղեկատվության ամփոփման մեթոդի, այստեղ ալգորիթմի հաշվարկում մասնակցել են միայն այն ծածկագրերը, որոնք առավել շատ են առնչվում հենաշարժողական խնդիրներին: Այդ լայն ցանկից, ալգորիթմի հաշվարկում ներառվել են 15 ծածկագրեր, որպեսզի ալգորիթմի բանաձևում ներառվելիք ծածկագրերի ընդհանուր թիվը չգերազանցի 25-ը:

Գծապատկեր 12: Խնդիրներ գործունեություն և մասնակցություն d ծածկագրերում, հենաշարժական, 6-15 տարիքային խումբ





Ալգորիթմի հաշվարկում երկու դեպքում էլ ներառվում են միայն s/b/d ծածկագրերը, քանի որ միջավայրային գործոնների գնահատումը շատ սուբյեկտիվ է և չի կարող դեռ հիմք հանդիսանալ անձի ֆունկցիոնալ սահմանափակման համար; Այդ գործոնները հիմք են հանդիսանում ծառայությունների փաթեթի երաշխավորման ժամանակ:

Գծապատկեր 13: Միջավայրային խոչընդոտները e ծածկագրերում, հենաշարժական, 6-15 տարիքային խումբ



Գնահատման արդյունքների հիման վրա հաշվարկված ընդհանուր միավորը այս երեխաների համար ցույց է տալիս, որ ֆոկուս հարցաշարերով գնահատման և ալգորիթմի հաշվարկի համար միայն վճռորոշ ծածկագրերի կիրառման և հատկապես բանաձևում ներառվող վճռորոշ ծածկագրերի կայուն սահմանաչափի պարագայում գնահատման արդյունքները շատ ավելի ճիշտ են ներկայացնում երեխաների խնդիրները և ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը, ծառայությունների փաթեթի որոշման համար;



15-18 տարեկանների խումբ.

Այս խմբում գնահատվել են երկու դեռահաս՝ տղա և աղջիկ՝ մտավոր և հենաշարժական խնդիրներով:

Այս դեպքում ևս գնահատման արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ ֆոկուս հարցաշարը հնարավորություն է տալիս շատ ավելի մանրամասն բացահայտել անձի ֆունկցիոնալության խնդիրները՝ ուժեղ և թույլ կողմերը և միջավայրային խոչընդոտները:

Միևնույն ժամանակ ալգորիթմի հաշվարկը ֆիքսված ծածկագրերի քանակով՝ 25 ծածկագրեր մտավոր և հենաշարժական խնդիրների համար. սակայն վճռորոշ ծածկագրերի ցանկից տվյալ անձի համար առավել կարևոր ծածկագրերի ընտրության հնարավորությամբ, թույլ է տալիս հաշվարկել անձի ֆունկցիոնալության սահմանափակման առավել ճշգրիտ միավոր:

Ստորև գծապատկերները համեմատում են ընդհանուր և ֆոկուս հարցաշարերով ստացված գնահատման արդյունքները իսկ վերջում ներկայացված է 3 մոտեցումներով ալգորիթմի հաշվարկի արդյունքը:

Գծապատկեր 15: Խնդիրներ օրգանիզմի ֆունկցիաներ b ծածկագրերում, մտավոր, 15-18 տարիքային խումբ





Գծապատկեր 16: Խնդիրներ մարմնի կառուցվածքում և օրգանիզմի ֆունկցիաներ b ծածկագրերում,
հենաշարժական, 15-18 տարիքային խումբ





Գծապատկեր 17: Խնդիրներ գործունեություն և մասնակցություն d ծածկագրերում,
մտավոր, 15-18 տարիքային խումբ





Գծապատկեր 18: Խնդիրներ գործունեություն և մասնակցություն d ծածկագրերում, հենաշարժական, 15-18 տարիքային խումբ





Գծապատկեր 19: Միջավայրային խոչընդոտները e ծածկագրերում, մտավոր, 15-18 տարիքային խումբ



Գծապատկեր 20: Միջավայրային խոչընդոտները e ծածկագրերում, հենաշարժական, 15-18 տարիքային խումբ



Գծապատկեր 21: Ֆունկցիոնալության սահմանափակման ամփոփ միավորը



0-18 տարիքային խմբի համար գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ գործող չափորոշիչով միայն հաշմանդամ երեխա կարգավիճակը հնարավորություն չի տալիս նկատելու երեխաների առանձնահատկությունները՝ ըստ կարիքի և ծանրության աստիճանի: Մինչդեռ ժամանակ լրամշակված ալգորիթմը հնարավորություն է տալիս դուրս բերել ֆունկցիոնալ սահմանափակման առավել ճիշտ աստիճանը և սահմանել ծառայությունների առավել նպատակային փաթեթ:

Աղյուսակ 2: 0-18 տարիքային խմբի համար գործող և փորձարկվող գնահատման մոտեցումների համեմատությունը

Փորձաքննված անձ	Հաշմանդամության խումբը գործող չափորոշիչներով	Ալգորիթմի հաշվարկ՝ ֆունկցիոնալ սահմանափակման աստիճան		
		Տարբերակ 1	Տարբերակ 2	Տարբերակ 3
0-3 տարիքային խումբ	Հաշմանդամ երեխա	12%	46%	55%
3-6 տարիքային խումբ				
Մտավոր 1	Հաշմանդամ երեխա	60%	68%	76%
Մտավոր 2	Հաշմանդամ երեխա	62%	80%	88%
6-14 տարիքային խումբ				
Մտավոր 1	Հաշմանդամ երեխա	20%	40%	54%
Մտավոր 2	Հաշմանդամ երեխա	3%	7%	8%
Լսողական 1	Հաշմանդամ երեխա	57%	85%	100%
Լսողական 2	Հաշմանդամ երեխա	44%	68%	100%
Հենաշարժական 1	Հաշմանդամ երեխա	25%	50%	53%
Հենաշարժական 2	Հաշմանդամ երեխա	26%	51%	55%
15-18 տարիքային խումբ				
Մտավոր	Հաշմանդամ երեխա	14%	34%	46%
Հենաշարժական	Հաշմանդամ երեխա	23%	43%	48%

18 + տարեկանների խումբ.

18-ից բարձր տարիքային խմբից փորձարկմանը մասնակցել են 13 անձ՝ 7 տղամարդ, 6 կին, ընդ որում կանայք հիմնականում քրոնիկ հիվանդություններ ունեցողներն էին:

Աղյուսակ 3: 2018 թվականի դեկտեմբերի 4-7-ը ռետրոսպեկտիվ փորձաքննության մասնակցած 18-ից բարձր տարեկանները

	Տղամարդ	Կին	Ընդամենը
հենաշարժական	**2**		**2**
մտավոր	**1**	**1**	**2**
լսողական	**1**		**1**
տեսողական	**2**		**2**
քրոնիկ	**1**	**5**	**6**
իմունային		2	
հեմատոլոգիա	1	1	
սրտանոթային			
միզասեռական, երիկամային		2	
Ընդամենը	**7**	**6**	**13**

Մասնակիցները հավասարապես բաշխված էին նաև ըստ տարիքի՝ երիտասարդներ, միջին տարիքի և կենսաթոշակառուներ:

Ռետրոսպեկտիվ փորձաքննության արդյունքները ամփոփվել են ըստ երեք մոտեցումների՝ առաջին դեպքում հիմք է վերցվել Ընդհանուր հարցաշարը և

ֆունկցիոնալության սահմանափակման ամփոփ միավորը դուրս է բերվել 2017 թվականի փորձարկվող ալգորիթմի հիման վրա, երբ անձի համար գնահատված բոլոր ծածկագրերի որակիչների հանրագումարը բաժանվում է հարցաշարում առկա բոլոր ծածկագրերի առավելագույն որակիչների հանրագումարին: Երկրորդ մոտեցումը դիտարկում է ֆոկուս հարցաշարը և միայն վճռորոշ ծածկագրերում որակիչների հանրագումարի հարաբերությունը ընտրված բոլոր վճռորոշ ծածկագրերի որակիչների առավելագույն գումարին: Երրորդ մոտեցումը, որը դուրս է բերվել աշխատանքային խմբի և միջազգային փորձագետների քննարկումների արդյունքում դիտարկում է ֆոկուս հարցաշարում ընտրված վճռորոշ ծածկագրերը և ամեն անձի համար փոխարինելով 0 միավոր ստացած ծածկագիրը այն ծածկագրով, որը գնահատման արդյունքում ստացել է 4, 3 կամ 2 միավոր, մինչև լրանա տվյալ հաշմանդամության տեսակի համար սահմանված վճռորոշ ծածկագրերի առավելագույն քանակը. հենաշարժական, մտավոր խնդիրներ և քրոնիկ հիվանդություններ՝ 25 ծածկագիր, տեսողության և լսողության խնդիրներ՝ 15 ծածկագիր:

Ստացված արդյունքների ամփոփ պատկերը ցույց է տալիս, որ երրորդ մոտեցումն առավել ամբողջական է դուրս բերում անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ հաշվի առնելով անձի ունեցած բոլոր դժվարություններն ու խնդիրները:

Գծապատկեր 22: Երեք մոտեցումներով պիլոտ փորձաքննության արդյունքների հիման վրա ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանի գնահատման արդյունքները ամփոփ պատկերը 18-ից բարձր տարիքային խումբ



Այս տարիքային խմբի համար մանրամասն չենք ներկայացնում ընդհանուր և ֆոկուս հարցաշարերի համեմատության արդյունքներն ըստ ՖՄԴ ենթաոլորտների, ինչպես դա արվել է մինչև 18 տարեկանների համար, քանի որ պատկերը նույնն է. ֆոկուս հարցաշարը հնարավորություն է տալիս գնահատել տվյալ անձին առավել բնորոշ ծածկագրերը:

Քանի որ 18-ից բարձր տարիքային խմբի համար գործող չափորոշիչներով սահմանվում են հաշմանդամության խմբեր, երեք մոտեցումներով ստացված

ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանները համեմատվել են նաև այդ խմբերի հետ.

Աղյուսակ 4: Երեք մոտեցումներով պիլոտ փորձաքննության արդյունքների ամփոփ պատկերը 18-ից բարձր տարիքային խումբ

Փորձաքննված անձ	Հաշմանդամության խումբը գործող չափորոշիչով	Ալգորիթմի հաշվարկ՝ ֆունկցիոնալ սահմանափակման աստիճան		
		Տարբերակ I	Տարբերակ II	Տարբերակ III
Մտավոր 1	Երկրորդ խումբ	8%	27%	46%
Մտավոր 2	Երկրորդ խումբ	17%	42%	74%
Տեսողական 1	Առաջին խումբ	16%	32%	81%
Տեսողական 2	Առաջին խումբ	17%	27%	70%
Լսողական	Երկրորդ խումբ	5%	20%	29%
Հենաշարժական 1	Առաջին խումբ	26%	37%	67%
Հենաշարժական 2	Առաջին խումբ	23%	35%	43%
Քրոնիկ: սրտանոթային	Երկրորդ խումբ	14%	15%	16%
Քրոնիկ: հեմատոլոգիա	Երրորդ խումբ	13%	19%	34%
Քրոնիկ: իմունային 1	Երրորդ խումբ	8%	10%	16%
Քրոնիկ: իմունային 2	Երկրորդ խումբ	23%	33%	39%
Քրոնիկ: մետաբոլիկ	Չունի խումբ	0%	4%	10%
Քրոնիկ: միզասեռական, երիկամային	Երրորդ խումբ	3%	4%	15%

Առաջարկություններ

Ռետրոսպեկտիվ փորձաքննության արդյունքները ցույց տվեցին, որ անցումը ֆոկուս հարցաշարերի արդարացված է և հնարավորություն կտա առավել համապարփակ և ամբողջական գնահատել անձի կարիքները: Բացի այդ, առաջարկվող նոր ալգորիթմով առավել ճիշտ է դուրս բերվում անձի ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանը, ինչը կնպաստի ճիշտ որոշումների կայացմանը:

Ընդհանուր և ֆոկուս հարցաշարերի արդյունքների գնահատման համեմատությունը նույնպես ցույց է տալիս, որ ֆոկուս հարցաշարերով յուրաքանչյուր տեսակի հաշմանդամության կամ առողջական խնդրի դեպքում գնահատվում և դուրս են բերվում տվյալ անձին բնորոշ խնդիրները, որոնք և թույլ կտան առավել հասցեական սահմանելու անձին տրամադրվող աջակցությունը:

Պիլոտի արդյունքների հիման վրա աշխատանքային խումբը կարող է գնահատել նաև ամեն կոնկրետ դեպքի համար՝ ըստ գնահատված կարիքի, առաջարկվող և երաշխավորվող ծառայությունների փաթեթը:

Հավելվածներ

Հավելված 1

ԱՀԿ ՖՄԴ ներդրման շրջանակներում 2018 թվականի դեկտեմբերի 4-7 իրականացվող պիլոտ ծրագրի գործընթացի նկարագրություն

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի աջակցությամբ մշակել է հաշմանդամության գնահատման գործիքակազմ (ֆունկցիոնալության գնահատման հարցաշար, ինքնագնահատման թերթիկ), մեթոդական ուղեցույցեր այդ գործիքակազմով գնահատելու համար: 2017թ. նախարարությունն անցկացրել է փորձնական ծրագիր՝ կիրառելով մշակված գործիքները և մեթոդաբանությունը: Դրա արդյունքում վեր էին հանվել խնդիրներ, որոնք քննարկվել են փորձագետների հետ: վերջիններիս կողմից ներկայացվել են դրանց լուծման եղանակներ: որի արդյունքում գործիքները լրամշակվել են:

Միաժամանակ, նախարարությունը դիմել է Եվրամիության SOCIEUX+ ծրագրին՝ տեխնիկական աջակցություն ստանալու համար՝ ծանոթանալու այն երկրների փորձին, որոնք արդեն իսկ պետականորեն կիրառում են ՖՄԴ-ն հաշմանդամության գնահատման գործընթացում: Առաքելության շրջանակներում փորձագետների հետ համագործակցությամբ գործիքակազմը որոշակի խմբագրության է ենթարկվել: Լրամշակված գործիքակազմը (արձանագրություններ, վինետ, ընդհանուր հարցաթերթ) և մեթոդաբանությունը ևս անհրաժեշտ է փորձարկել:

Այսպիսով, նախարարությունը 2018թ. դեկտեմբերին կրկին իրականացրեց փորձնական ծրագիր՝ փորձարկելով մշակված 2 գործիքակազմն էլ: Նպատակն էր՝ հասկանալ 2 գործիքակազմերի դրական և բացասական կողմերը, վեր հանել խնդիրները և գտնել այն լավագույն (տեղայնացված) տարբերակը, որը համապատասխանում է մեր երկրի առանձնահատկություններին:

Մինչ փորձնական ծրագիրն սկսելը իրականացվել է գնահատող մասնագետների վերապատրաստում:

Նախարարությունը նոյեմբերի 29-30 կազմակերպել է հանդիպումներ համապատասխան գնահատմանը մասնակցող մասնագետների համար, ներկայացնելով նպատակները, գործիքները, մեթոդաբանությունը, այլ մանրամասներ, որոնք առնչվում են ծրագրի հետ:

Փորձնական ծրագիրն իրականացվել է ռետրոսպեկտիվ եղանակով: Հարցը քննարկվել է հաշմանդամության ոլորտի ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս կողմից ներկայացվել են կամավոր անձանց ցուցակ, ովքեր համաձայնվել են անցնել գնահատում փորձնական ծրագրի շրջանակներում: Նրանք գնահատվել են 2 գործիքակազմերով:

Հաշվի առնելով, որ այդ անձիք ունեն տեղաշարժման դժվարություններ, կազմակերպվել է նաև նրանց տրանսպորտով տեղափոխման հարցը:

Ցուցակն ստանալուց հետո մշակվել է ժամանակացույց, ընտրվել են գնահատողները: Նախարարությունը ԲՍՓ գործակալությունից նախապես ստավել էր այդ անձանց ԲՍՓ գործերը՝ առողջության գնահատումն իրականացնելու համար:

Գնահատողների կազմում ընդգրկվել են բժիշկներ և վերականգնողաբաններ:

Փորձնական ծրագիրը կազմակերպելու համար նշանակվել են համապատասխան դերակատարներ՝ սոցիալական աշխատող, վինետը լրացնող անձ, գնահատվող անձի հիմնական խնդիրներից ելնելով ընտրվել են համապատասխան մասնագետները՝ բժիշկները համապատասխան նեղ մասնագիտությամբ (ըստ արձանագրությունների) և վերականգնողաբաններ (էրգոթերապիստներ, ֆիզիոթերապիստներ, հոգեբաններ, այլ):

